

Կարճվել է Քրիստինե Խանումյանի նկատմամբ հարուցված քրեական գործը



24.07.2015 20:17

Գլխավոր դատախազությունն այսօր հայտարարություն է տարածել, որտեղ նշում է, որ կարճվել է ilur.am կայքի խմբագիր Քրիստինե Խանումյանի դեմ [հարուցված քրեական գործը](#): Գլխավոր դատախազությունը, սակայն, չի նշել, թե որն է գործը կարճելու իրավական հիմքը: Միաժամանակ, նշվում է, թե գլխավոր դատախազ Կոստանյանը պատասխան [նամակ է գրել](#) Խանումյանի գործով ԱԳ նախարար Նալբանդյանին [նամակ հղած](#) ԵԱՅԿ Մամուլի ազատության հարցերով հանձնակատար Դուևյա Միյատովիչին, որտեղ էլ հայտնել է գործը կարճելու մասին իր որոշման մասին:

Դատախազության հայտարարությունը՝ առայժմ առանց մեկնաբանությունների, ստորել.

«Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազի որոշմամբ կարճվել է «Ստարտ-Մեդիա» ՍՊ ընկերության տնօրեն, «ilur.am» ինտերնետային կայքի խմբագիր Քրիստինե Խանումյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 353-րդ հոդվածի 2-րդ մասով (դատական ակտը դիտավորությամբ չկատարելը) հարուցված քրեական գործը:

Միաժամանակ, նկատի ունենալով, որ 2015 թվականի հուլիսի 16-ին Մամուլի ազատության հարցերով ԵԱՅԿ ներկայացուցիչ Դուևյա Միյատովիչը մտահոգություն էր հայտնել ilur.am կայքի խմբագիր Քրիստինե Խանումյանի դեմ հարուցված քրեական գործի առնչությամբ, այդ կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանը նամակ

Է հղել տիկին Միյատովիչին: Նամակում մանրամասն բացատրել է հարուցված քրեական գործի բոլոր հանգամանքները, ինչպես նաև միջազգային և ներպետական օրենսդրության այն չափանիշները, որոնք հաշվի են առնվել քրեական գործը հարուցելիս: Գլխավոր դատախազը Մամուլի ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչին հրավիրել է մասնակցել սեպտեմբերին կազմակերպվելիք կլոր-սեղան քննարկմանը, որի ընթացքում կքննարկվեն մի կողմից խոսքի ազատության պաշտպանության և մյուս կողմից հանրության այլ կենսական շահերի, օրինակ արդարադատության շահի պաշտպանության միջազգային չափանիշներին համահունչ հավասարակշռելու եղանակները»:

Միյատովիչին ուղղված նամակում՝ անդրադառնալով իր որոշմանը՝ Կոստանյանը գրել է. «Այնուամենայնիվ՝ հաշվի առնելով մի կողմից՝ խոսքի ազատության և մյուս կողմից հասարակության մոտ արդարադատության ընկալման ժողովրդավարական հասարակության չափանիշներին համահունչ հավասարակշռելու անհրաժեշտությունը, Ձեր կողմից արված հայտարարությունը, ինչպես նաև բազմաթիվ այլ հանգամանքներ՝ իմ կողմից որոշում է կայացվել կարճել Քրիստինե Խանումյանին նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 353-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցված քրեական գործը»:

Հ.Գ. Քրիստինե Խանումյանի դեմ հարուցված գործը կարճելու մասին դատախազության որոշման վերաբերյալ մեր կայքը հանդես կգա առանձին հայտարարությամբ:

Տե՛ս ավելին՝

<http://www.ilur.am/news/view/47481.html#sthash.JMKvUOn2.dpuf>